

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբլի:
Առանձին համարները 7 կոպեկով:
Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:
Մեր հասցեն. Тифлисъ, Редакция «Мшакъ».
կամ Tiflis, Rédaction «Mschak».

Խմբագրությունը լաց է առաւօտեան 10—2 ժամ
(լացի կիրակի և առն օրերից):
Ցայտարարությունը ընդունվում է ամեն լեզուով:
Ցայտարարությունների համար վճարում են
իրաքանչիւր բառին 2 կոպեկ:

ՆԵՐԿԱՑ 1891 ԹԻՒԱԿԱՆԻՆ

„ՄՇԱԿ“

ԴՐԱՎԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Հրատարակվում է Թիֆլիսում, նոյն դիրքով և նոյն պրոպագանդայով: Մենք կը ստանանք սեփական ՀԵՌԱՎԱՆՆԵՐ:
«ՄՇԱԿ» տարեկան գինը 10 ռուբլի է, տասն և մէկ ամսվանը՝ 9 ռուբլի, վեց ամսվանը՝ 6 ռուբլի:
Գրվել «ՄՇԱԿ» կարելի է ԽՍՐԱՎԱՐԱՍԱՆԸ (Բարձրագույն և Բարձրագույն փողոցների անկյունում, Թամարյանի տանը):
Կայսերական ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿ» գրվելու համար պէտք է դիմել հետևեալ հասցեով. ТИФЛИСЪ, Редакция газеты «МШАКЪ», իսկ արտասահմանից. Tiflis, Rédaction du journal arménien «MSCHAK»:
Ցայտարարություններ ընդունվում են թէ հայերէն, թէ ռուսերէն և թէ օտար լեզուներով:
Քառերն վճարվում է 2 կոպեկ:
«Մշակ» առաջին երեսի վրա մասնաւոր յայտարարութիւններ չեն տպագրվում, այլ տպագրվում են միմիայն՝ լրագրողների յայտարարութիւնները, մասնացուցակները և պաշտօնական հաստատութիւնների յայտարարութիւնները, որոնց համար կրկնակի է վճարվում: Մասնացուցակի տպագրելը առաջին երեսի վրա արժէ 4 ռուբլի, իսկ չորրորդ երեսի վրա՝ 2 ռուբլի:

Խմբագիր-հրատարակող ԳԻՐԳՈՐ ԱՐՄԵՆՆԻ

Այսօր 2 մարտի 1891

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆՈՒՄ

Լինելու է

ՅՕԳՈՒՏ ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ՀՐԱՏԱՐԱԿԶԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ԴԻՄԱԿԱԻՈՐ ՊԱՐԱՀԱՆԴԵՍ

(Կամեցողները կարող են լինել և առանց դիմակի):

Նրաժշտութիւնն է եւրոպական և տեղական: Մուտքի գինն է՝ կանանց համար 1 ռ., պարոններին՝ 1 ռ. 50 կ:

Սկիզբն է երեկոյեան 9 ժամին:

Տոմարները վաղօրոք կարելի է ստանալ Ժողովարանի շէնքարի մօտ:

2—2

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐԳԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Նոր-Բայազէտից. Նամակ Խմբագրին. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Էլզա-Լօթարինգիա. Նամակ Ֆրանսիայից. Նամակ Թիւրքիայից. Արտաքին լուրեր.—ԽԱՌՆԻ ԼՈՒՐԵՐ.—ՀԵՌԱՎԱՆՆԵՐ.—ԲՈՐՍՍԱ.—ՑԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ Սուրբ ազգիւր:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՍՈՒՐԲ ԱՂԶԻԿԸ

(ՀԵՄԱՐԻՑ ԱՆՅԳ)

I

Ես չեմ յիշում ոչ քաղաքի անունը և ոչ տարեթիւրը, որին վերաբերում է իմ պատմութիւնը. դա բոլորովին անհիշելի է. այդքանը միայն ասում եմ, որ այդ քաղաքի արեւմտեան կողմը, երկու լեռների մէջ, նեղ ձորակում շատ ժամանակից ի վեր և մինչև այսօր էլ տեսնվում են երկու աւերակ մատուռների, այդ ձորակից, մատուռներից մի քիչ հեռու, քարայրով վաղում է մի վոդ-բրիկ վճիտ առուակ. մեղանից մի 25—30 տարի լինելով, այդ ձորակում կային և երկու բարդի ծառեր, բայց այժմ նրանց հետքն անգամ չը կայ: Այդ մատուռը և առուակը քաղաքի իրական տեղի պաշտելի տեղերն են՝ առուակի շուրջը թռչկական զօրութիւն ունին, ամեն ցաւից աղաւթում է հիւանդներին, իսկ մատուռները քաղաքի

ՆԵՐԳԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՆՈՐ-ԲԱՅԱԶԷՏԻՑ

Փետրվարի 24-ին

Նոր-Բայազէտն ընկած է մի ձորակի մէջ, ուղիղ Գեղամայ լճի արեւմտեան կողմը. հեռու լինելով ճանապարհորդական հաղորդակցութիւնից, համարեա թէ նրկում է անհարժեքեան մէջ: Ինչ

բարեպաշտ կանանց և օրիորդների ուխտատեղին է: Բարդի ծառերը, որոնք այժմ չը կան, վկայ էին այն բոլոր անմեղ ուրախութիւններին, որ կատարվում էին նրանց տակ:

Ամեն կիրակի այդտեղ կարելի էր տեսնել մի քանի ընտանիքներ ամեն տեսակ պաշարով. նրանց առաջին գործը լինում էր լողանալ առուակում, չը նայելով ջրի ստանութեան, մտնել մատուռներից միում, որտեղ քանդված սեղանը դեռ ևս մնում էր, աղօթել այդ սեղանի առջև, մոմ վառել, խոսել ծխել և այդ ամենից յետոյ բարդի ծառերի ստուերներում բանալ ձօն սեղան, ուտել, պարել, խաղալ ու երգել: Նրեկոյեան տուն վերադառնալու ժամանակ նորից լողանալ, մտնել մատուռ, աղօթել և իրանց հազած չորերից մի կտոր պատառելով՝ կապել մատուռի մօտ գտնված փշալից թուփին, որը տարիներ ընթացքում ամեն մի այցելուից ընդունելով մի կտոր, ծածկվել էր հազարաւոր գոյներով: Այդ կտորի հետ բարեպաշտ ուխտատուները թողնում էին այնտեղ և իրանց ցաւերը:

Չը գիտեմ ինչ հանգամանքներից ստիպված, չը նայելով եթէ կարելի է այսպէս ասել, այն

որ էր սրանից մի քառորդ դար առաջ, նոյնն է աշխարհ, բոլորովին փոխութիւն դէպի առաջադիմութիւնը չէ նշմարվում: Քաղաքիս բնակիչներին մեծամասնութիւնը պարագում է հողագործութեամբ. հնադարեան երկրագործութիւնը թէև շատ տեղեր փոփոխվել է նորի վրա, բայց մեծամասնութիւնը է, ինչ որ էր. հողագործը վարում է, կախում է իր պագերի ստեղծած գործիքներով, նրան անձնաթիւ են մշակութեան համար կատարվող գործիքները, նա չը գիտէ, որ փոխանակ 8 զուգ դանդաղաբայ կոյնքեր, կարելի է լծել արօրը մի զուգ ձիեր, ինչպէս անում են հարեան մշակաները: Եւ այդ բոլորին ծանօթացնելու նրան պարտաւոր են քաղաքիս նշանաւոր հասկացող երիտասարդները, որոնք մի մեծ բարութիւն արած կը լինեն. հողագործ դասակարգին իրաց մասնագիտական խորհուրդներով:

Հողորհ Նիկոլ հարկւր տուն ունեցող Նոր-Բայազէտը մինչև այսօր չունի իր համար մի սեփական բօխի, որպէս զի հարկաւոր եղած ժամանակը, դիմելն նրա օգնութեանը: Կոկիսի մի քանի նշանաւոր գիւղերը մինչև անգամ ունեն իրանց բօխի, իսկ մնաց գոյցն կը սպասենք շատ տարիներ, որ մարդասիրութեան զգացմունքից զուրկ Նոր-Բայազէտից զգան օչը անհրաժեշտ կարեւորութիւնը: Նոր-Բայազէտից հիւանդը շաբաթներով սպասում է մինչև գաւառական բօխի վերադառնալ գիւղերից և այն ժամանակ դիմում են նրան, խնդրելով այցելել հիւանդին, իսկ մարդասէր բօխի շտապում է որքան կարելի է շուտով օգնել, բայց մեծ մասամբ ուշ է լինում. նա այժմ անգործ է լինում հիւանդին վերադարձնել նորից կենալ: Վերջապէս Նոր-Բայազէտի պէս մի քաղաքին ամօթ է մինչև այժմ չունենալ բօխի, որպէս զի բնակիչները հարկաւոր եղած ժամանակ, դիմելն նրա օգնութեանը:

Ամիս 14-ին, ս. Աստուածածին եկեղեցում մկրտվեց մի երիտասարդ քերթ, ընդունելով հայ-լուսաւորչական դաւանութիւնը:

Մ.

ՆԱՄԱԿ ԽՍՐԱՎԱՐԻՆ

Գանձակ, 19 փետրվարի

Ձեր լրագրի № 13-ում կարդացի մի նամակ, որի մէջ պ. Միսականը ակնարկում է ինչ-ինչ զեղծումների մասին, որոնք իբր թէ գործվել են իմ կողմած ժողովում, ս. Յովհաննէս եկեղեցու համար նոր երեցիօրեան ընտրութեան միջոցին: Խնդրում եմք շնորհ անել այս իմ նամակը գեղեցիկ և ձեր լրագրում, բուն իրողութիւնը պարզելու համար:

Պ. Միսականն ասում է թէ միայն մի ծանուցիլ է «Խելառ-օղլին» անունը: Ո՛վ էր այդ խելառ-օղլին—ես չը գիտեմ. այս քանը միայն յայտնի է, որ մեղանից մի քանի տաճնակ տարիներ առաջ մի անձնաւորութիւն, խելառ-օղլի անունով, վերահայեցողութիւն է ունեցել այդ մատուռներին, որից և վանքը ստացել է «Խելառ-օղլի» անունը:

Բայց միմիայն վանքի ու առուակի բժշկական զօրութիւնները էին, որ իզական սեփական ճաշում, տանում էին այնտեղ, այդտեղ կար և մի ուրիշ, ոչ պակաս գլխաւոր պատճառ. այդտեղ սիրահարական տեսակցութիւններ ևս կատարվում էին:

Եթէ լեզու ունենային աւերակ մատուռները, կենդանանային բարդի ծառերը, նրանք կը պատմէին մեզ, թէ ինչպէս այդտեղ հայ օրիորդն ընտրում էր իր համար փեսայ, ինչպէս հայ երիտասարդը իրան ապագայ ամուսին, ինչպէս նրանք թաշկինակներով համոյր էին ուղարկում միմեանց, ինչպէս հասակաւորները մի կողմը նստած, նայելով երիտասարդների ուրախութեանը, իրանք ևս մի առ ժամանակ մոռանալով ներկան,

ցաղիր է եղել կայքրած եկեղեցու գաւթում, ընտրութիւնը ծածուկ անելու մտքով, այն ինչ քառանից աւերակ ծանուցումներ են կայքրած եղել եկեղեցիների պատերի վրա և այն փողոցներում, ուր ընտրվում են ս. Յովհաննէս ծխականները: Կանխօրէն էլ այդ մասին ծանուցումներ էին արված եկեղեցու մէջ: Նամակագրի ասելով Ս. Լուսաւորչի եկեղեցու ծխականներն էլ մասնակցում էին ընտրութեանը, այն ինչ միայն մի հոգի Ս. Լուսաւորչի ծխակից, այն էլ անգիտութեամբ, ինչպէս համոզվեցան ժողովականները, ջուշ էր տուել, նրա ջուշն էլ ես չունեցուցի: Իսկ եթէ միւս եկեղեցիների ծխականներից մի երկու հոգի կանգնած էին լոկ իբրեւ հանդիսատեսներ, ով կարող է և իրաւունք ունի նրանց արգելել հանդիսատես լինելու: Պ. Միսականի ասելով, ընտրութեան միջոցին երևացել են վաղօրօք պատրաստած քուէաթղթեր, պնդում է, որ ես այդ քուէաթղթերն իբր վաւերական եմ ընդունել: Առ այս յայտնում եմ հետեւեալը. ընտրութիւնը նշանակված էր առաւօտեան ժամերգութիւնից յետոյ և ոչ 8 ժամին, ինչպէս Միսականն է գրել, սակայն մի քանի անբարեմիտներ, աղմուկ հանելով, ցրվեցին հաւաքված ժողովութիւնը լրացած, անկանոն է ժողովը: Առաւօտեան ժամից յետոյ գնացողներից ոմանք իրանց ստորագրութեամբ քուէաթղթեր տուին ինձ: Պատարագից յետոյ ժողովում ես այդ թղթերը յետ դարձրի իրանց տեղերին, որ նորից գրեն, իսկ այն թղթերը, որոնք ստորագրութիւն չունէին, ես ոչնչացրի, ինչպէս այդ գիտեն բոլոր պատգամաւորները: Գալով այն հարցին՝ թէ այժմ ման երեցիօրեան ժամանակը լրացած չէ և թէ նոր ընտրութիւն նշանակել իբր մի ինտրիգա է նրա դէմ—այս մասին թող հանդիստ կենայ պ. Միսականը, որովհետեւ ներկայ երեցիօրեան ընտրված է 1888 թվ. փետրվարի 10-ին, և նոր ընտրութիւնն ևս նշակել եմ յունվարի 2-ին, հոգեւոր խխանութեան կողմից տուած հրամանի հիման վրա:

Յանկալի էր, որ գաւառական թղթակիցներն աւերակ բարեկեցիկ լինէին և լրագրութիւնը չը մոլորեցնէին իրանց տուած անհիմն տեղեկութիւններով:

Բարեկարգիչ Գանձակի հայ եկեղեցիների՝ Սիմէոն քահանայ Տէր-Խաչատրեանց

ՆԵՐԳԻՆ ԼՈՒՐԵՐ

Նրէկ, ուրբաթ օր, մարտի 1-ին, Թիֆլիսի Սիմէոն մայր-եկեղեցում, կատարվեց հանդիսաւոր

վերադառնում էին անցկալին. նրանք ևս գուցէ առաջին անգամ սիրեցին այդ առուակի մօտ, այդ ծառերի տակ...

Կիրակի օրերը, ճաշից յետոյ, միշտ կարելի էր տեսնել երիտասարդների խմբեր, որոնք մաքուր հագնված, զարդարված, գտակներ մի կողմ ծռած, ասիական նուազածուների հետ միասին, դիմում էին դէպի վանքը և վանքից մի քիչ հեռու, առուակի ձախ կողմում գտնված տափարակ դաշտի վրա սկսում էին պարել. պարկեշտասուն օրիորդները խմբերով հաւաքվում էին նայելու այդ երջանիկ արարածներին, որոնք ազատ պարում, երգում և զուարճանում էին, իսկ իրանք, խեղճ աղջիկները, ապրում էին որպէս բանտարկեալներ, միշտ հակողութեան ներքեւ. նրանց ամեն մի խօսքը, ամեն մի շարժումը, հայեացքը պէտք է լինէր հաճելի իրանց մեծերին, հակառակ դէպքում նրանք ստանում էին խիստ յանդիմանութիւն:

Այո, թէև պակաս էին և այնպիսի բոլորներ, երբ նրանք ևս կարող էին երգել, խաղալ, պարել, խորհրդաւոր ակնարկներ ձգել երիտասարդներին, բայց այդ քաղաքի բոլորները այնքան ա-

պատարագ և հոգեհանգիստ հանգուցեալ թագաւոր Կայսր Ալեքսանդր Նիկոլաւիչի յիշատակին: Իսկ այսօր, մարտի 2-ին, Նորին Կայսերական Մեծութեան թագաւոր Կայսր Ալեքսանդր Ալեքսանդրովիչի գահակալութեան օրը, նոյն Սիսիի մայր-եկեղեցում կատարվելու են հանդիսաւոր պատարագ և զոհացողական մատչանքներ:

«Մշակի» հետեւել, № 26, Բարեկենդան տօների պատճառով, կը հրատարակենք հինգշաբթի, մարտի 7-ին:

Յիշեցնում ենք թիֆլիսի հասարակութեանը, որ այսօր, մարտի 2-ին, թիֆլիսի ժողովարանում լինելու է դիմակաւոր պարահանդէս յօգուտ հայոց Հրատարակչական ընկերութեան:

ԹԵՕԴՈՍԻԱՅԻՑ մեզ գրում են. «Այստեղ սկսել են կառուցանել երկաթուղու գիծը, որը պիտի միացնէ քաղաքը հարաւային Ռուսաստանի երկաթուղային ընդհանուր գծերի հետ: Կայսրանը շինելու է քաղաքից 3 վերստ հեռու, հիւսիսային կողմում, բայց երկաթուղու մի գիծ միացնելու է կայսրանը քաղաքի հետ, իսկ միւսը նաւահանգստի հետ: Երեք հոգի ինժեներներ նշանակված են դիմը կառուցանելու համար, պ.պ. Եսայեան, Անդրուսիչ և Բեկաբորցով: Այժմ, երբ շինվում է երկաթուղին, ամէն օր նոր նոր մարդիկ են ըսկսել գալ թէօդոսիա, դործ որոնելու համար»:

Թէօդոսիայից մեզ գրում են և հետեւել. «Այս տարի ձմեռը շատ երկար տեղացի մեղանում. յունվարի 10-ին եկած ձիւնը մինչև այժմ դեռ է և չէ հալվել: Իսկ այժմ փետրվարի վերջին է արդէն: Անդադար փչում է ցուրտ քամի: Ասում են որ այդ տեսակ խիստ և երկար ձմեռ այստեղ երբեք չէ պատահել: Կենսական միջոցներն էլ թանկ են. միսը ծախվում է 13 կօպէկով ֆունտը, 10 հատ ձու արժէ 40—50 կօպէկ, մի հատ հաւ 1 ռուբլուց մինչև 1 ռ. 20 կ.: Դրանք չը տեսնված գներ են այստեղ»:

Փետրվարի 1-ին ՓՕԹԻՈՒՄ, քաղաքագլխի կատարված ընտրութեան մասին ձայնաւորներին երկուսը, Վախրամովի հակառակորդներին, բողոքեցին ֆուլթայիսի նախագահայեւորին, մի հրէայ ձայնաւորին անկանոն երդուցներով պատճառով: Փուլթայիսի քաղաքային գործերի նախագահական ատենանք, ի նկատի առնելով բողոքը, անվաւեր ձանաչեց ընտրութիւնը, վաւերացրեց նորից քաղաքագլխի ընտրութիւն նշանակվեց փետրվարի 24-ին: Այդ օրը, ինչպէս մեզ գրում են, ներկայ էին 27 ձայնաւորներ, ի միջի որոց և նոյն ինքը գեներալ Վախրամով: Ներկայ եղած ձայնաւորներին կրկին երդուցներն օրէնքի հիման վրա, երդուցներն նաև 2 ձայնաւորներին, որոնք առաջին նստի մէջ ներկայ չէին, թեկնածու առաջարկվեց միայն Վախրամով, քանի որ ուրիշ ոչ ոք չուզեց քուէարկվել: Գներալ Վախրամով դարձեալ ընտրվեց քաղաքագլխի 24 ձայնով ընդդէմ 2-ի: Մեր թղթակիցը յայտ է յայտնում, որ այս ընտրութիւնը կանոնաւոր կը ծանալով և գներալ Վախրամով չուտով ստանձնելով իր պաշտօնը, կարգաւարացնէ հասարակութեան իր վրա դրված յոյսը,

բազ էին թուում, որ խնդհ աղջկաներին այդ ամենը երազ էր թվում, և այժմ էլ նրանք խմբով կանգնած, գլուխ գլխի տուած, նայում էին երիտասարդներին և խօսում: Նրանց խօսակցութիւնը այնքան ցածր էր, որ հաղիւ էին միմեանց լուռ:

—Անուշ, տես այն ինչ սիրուն սեխեր ունի, աչքերով ցոյց տալով մի երիտասարդի վրա, ասում էր մինը և պինդ կերպով սեղմում իր մօտ կանգնած օրիորդի ձեռքը:

—Տես, այն երիտասարդը քամարը ինչ սիրուն է նստած մէջքին, ինչ բարակ մէջք է, ասում էր երկրորդը:

—Շուշան, դիտես ո՞վ է այն գեղեցիկ երիտասարդը—պարբաշին. տես ինչպէս գեղեցիկ է պարում և թաշկինակով կարծես մեզ էլ է հրաւիրում, վրա էր բերում երրորդը:

Եւ այդ սիրուն օրիորդները երկար նայելով ուրախ երիտասարդներին, խօսում էին և երբեմն կատակներ անում:

Երիտասարդները աւելի համարձակ էին գործում. նրանք զանազան շարժումներով, հայեաց-

որովհետև այդ ընտրութեան պատճառով շատ գործեր փոխում երեսի վրա էին մնացել:

ԲԱՊՈՒՅՑ, փետրվարի 24-ից մեզ գրում են. «Ուրախալի է տեսնել, որ թատրոնական գործը Բազում աւելի է արագ ընթանում, քան նոյն իսկ թիֆլիսում: Գեղարարներ ամբողջ մինչև այժմ աւելի քան 7 ներկայացում է տրված, թէ սիրողներին և թէ չգերասաններին» կողմից: Այդ բոլոր ներկայացումներին ժամանակ չգերասաններին կողմից պարզ աչքը: Եր ընկնում մի փայլուն յատկութիւն. դերասանները մեծ մասամբ իրանց դերերը չը գիտէին: Կարծէք պարոնները թէ ամբողջ գործի և թէ դերեր սովորելու վրա նայում են: Ի միջի այլոց: Գերեր բաժանվում են առհասարակ ինչպէս կը պատահի, կամ անհասկանալի միտմեղեք ստիպված և կամ, յանկարծ, կօմիկը հանդէս է դալիս դրամատիական դերում և այլն: Ահա մասամբ այս և մասամբ էլ օրվայ անյարմարութիւնը պատճառ եղաւ, որ դերասան Արեւիկան ըննեֆիսին նշանակված ներկայացումը—ամսիս 23-ին, զուտ չկաւ. մինչև երեկոյեան ժամը 7-ը ծախված էր 3—4 ռուբլու տոմսակ միայն: Խաղալու էին Գալֆայիսին «Արշակ» Բ. և «Միկիլի հարսանիք» անունով մի անմիտ փողովիլ: Ներկայացումը յետաձգվեց անյայտ ժամանակով: Պատրաստվում են խաղալու «Վարդանանց պատերազմը» հինգշաբթի օրը: Ցանկալի էր, որ պարոնները աւելի բարեխղճութեամբ վերաբերվէին գործին»:

Անցեալ տարի կատարվեց Ռուսաստանում բժիշկներին վիճակագրութիւնը: Ցայտնում է որ ընդամենը Ռուսաստանում կան 12,521 հոգի պրակտիկայով դեղագիտ բժիշկներ, որոնցից 12,112 տղամարդիկ են, իսկ 409 կանայք:

Աղամենի օգտին մեր խմբագրութեան մէջ եղած 101 ռուբլի 45 կօպէկ դուռնալը, այսօր ուղարկեցինք Կ. Պոլիս, իրան Աղամենին:

Տեղական լրագիրները հաղորդում են, որ Անտոն Կօրգանովի գործի ընտրութեան համար թիֆլիսի դատաստանական պալատի կարգադրութեամբ հրաւիրված 9 հոգի էկսպերտները վերջացրին իրանց աշխատանքը: Այժմ պիտի սկսվի գործին վերաբերեալ դատավարութիւնը:

Կրիմի ՂԱՐԱՍՈՒ-ԲԱՋԱՐ քաղաքից մեզ գրում են. «Փետրվարի 19-ին տեղիս հայոց ժողովարանի դահլիճում, հոգաբարձու պ. Յովհաննէս Սիւրենյանի աշխատութեամբ կայացաւ գրական-երաժշտական երեկոյի, յօլուտ քաղաքիս չքաւոր հայ աշակերտներին: Երեկոյի մասնակցողներն էին պ. Սիւրենյան, տիկին Վ. Սիւրենյան, օրիորդներ Եղորտեան, Կէլն, Ռուբենեան, պ. Եղորտեան և ուրիշներ: Երեկոյի բաւական աշխոյժ կերպով անցաւ: Միայն թոյլ կը տանք մեզ նկատել, որ պէտք էր կարգաւ այդքան երկար հատուածներ Գօգոյից և Պուշկինից, այդքան երկար ընթերցանութիւնը յարմար չէ: Գրական-երաժշտական մի երեկոյի ինչ և միանգամայն ձանձուր թէ պատճառում հասարակութեանը: Կարգադրիցան և հայեւրէն ոտանաւորներ: Երեկոյից յետոյ սկսվեցան պարեր, որոնք տեղիս մինչև ժամը երկուսը Դահլիճը լի էր ռուս և հայ հասարակութեամբ:

Քով և մինչև անգամ երգերով էին յայտնում իրանց զգացումները:

Այդպիսի ուրախութիւնները առհասարակ շատ ընտանիվում էին մինչև արեւի մայր մանելը, և ապա հետզհետէ վանքը դատարկվում էր և տիրում այնտեղ գերեզմանական լուռութիւնը, որը խանգարում էր միմիայն առուակի քչաքալով և վանքը ու բարդի ծառերը սպասում էին միւս կիրակի նորից կենդանանալու...

Բայց ևս ակամայ հեռացայ իմ պատմութիւնից:

II

Ամառնային ամիսներից մինչ էր և օրը կիրակի, առաւօտեան վաղ, դեռ արեւ չը ծագած, դէպի վանքը տանող լեռնային նեղ ճանապարհի վրա նկատվում էր կանանց ահապի բազմութիւն, ոմանք բոբիլ, ոմանք միմիայն գուլպայով, գոռով գոչումով դիմում էին դէպի ինչաւ-օղի: Արդեօք ինչ էր պատահել, որ այդպէս զրգուել էր կանանց բարեպաշտութիւնը. ձորակը և մատուռները արդէն լցված էին իգական սեռով. ինչպէս ասում են, ասեղ գցելու տեղ չը կար, իսկ նոր

Մուտք եղաւ 159 ռ. 20 կ., որից 47 ռ. 8 կ. ծախս հանելով, մնաց աղքատ աշակերտների համար դուռ արդիւնք 112 ռ. 12 կօպէկ»:

Այս օրերս վախճանվեց թիֆլիսի Վասիլ Միրզոյեան, որը անդաւակ լինելով, կտակեց իր կնոջ թիֆլիսում իր ունեցած երեք հատ տները, որոնք, ինչպէս ասում են, տարեկան մօտ 10 հազար ռուբլի եկամուտ են տալիս, այն պայմանով, սակայն, որ կնոջ մահից յետոյ, այդ տները քաղաքի սեփականութիւն դառնան: Այդ տների եկամուտով, կտակողի ցանկութեան համեմատ, պէտք է դատարարակիլն քաղաքիս չքաւոր աշակերտները:

Յունվարի 1-ից ներկայ թւի մինչև փետրվարի վերջը, այսինքն երկու ամսվայ ընթացքում, ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ կայսերական հրապարակական դրադարանը 400.000 այցելու-կարդացող է ունեցել:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԷԼԶԱՍ-ԼՕԹԱՐԻՆԳԻՍ

Այս օրերս գերմանական նոր կանցլէր Կապրի-վի կարգադրեց, որ նորից խիստ կերպով գործադրվեն անցադիւրների վերաբերեալ բացառիկ օրէնքները և այլ ևս թոյլ չը տրվին այն մի քանի թիֆլիսցիները, որոնք վերջին ժամանակներս գործ էին դրվում:

Ուրեմն կրկին ինչպե՞ս պատ Էլզաս-Լօթարինգիայի և Ֆրանսիայի մէջ:

Այդ կարգադրութիւնը դժգոհութիւն է յարուցել ոչ թէ միայն Ֆրանսիայում, այլ և Գերմանիայում: Ազատամիտ մամուլը կանցլէրի այդ վարմունքը համարում է մի այնպիսի քայլ, որը անվաղ է պետական գործերի գլուխ կանգնած մարդուն:

Ենթադրում են, որ այդ խտտութիւնը մի անուղղակի պատասխան է այն թշնամական ցոյցերին, որ վերջին ժամանակներս Ֆրանսիացիք արեցին Վիլհելմ կայսրի և առհասարակ Գերմանիայի հասցէին:

Բայց հարցը նրանումն է, արդեօք Վիլհելմը, եթէ մինչև անգամ վիճարկված էլ լինէր նա, իրան թոյլ պէտք է տար պարիզցիներին վրէժն առնել Էլզաս-Լօթարինգիայից: Ինչ մեղաւոր են Էլզասցիք, որ դիցուք Պարիզում չեն սիրում Վիլհելմ կայսրին:

Պաշտօնական դիրք ունեցող մարդիկ այդպէս վարվել ընդհանուր, պետական նշանակութիւն ունեցող հարցերում, չեն կարող: Գերմանիայում չը պէտք է մոռանալին և այն, որ պաշտօնական Ֆրանսիան իր կողմից բոլորովին այլ կերպ վարվեց. երբ այդի Վիլհոթիա կայսրուհին Պարիզ եկաւ, պաշտօնական Պարիզ նրան այնպէս սիրալիր կերպով ընդունեց, որ ինքն կայսրուհին շտապեց իր ջնքը գոհունակութիւնը յայտնել:

Այդպէս պէտք է վարվել և պաշտօնական Գերմանիան: Ինչպէս կարելի է նեղը գցել և շիղը հանել Էլզասցիներին և լօթարինգիայից: Նրա համար, որ Պարիզում մի խումբ մարդիկ, իրանց թոյլ են տուել թեկն ցոյցեր անել Գերմանիայի դէմ:

Խմբեր երեւում էին ամեն կողմից. այդտեղ կային պառաւներ և օրիորդներ, հասակաւոր կանայք և երեխաներ: Մատուռները պաշարված էին մի քանի կարդ կանանցով և հետզհետէ նորերը գալով, աշխատում էին որքան կարելի է մօտ կանգնել մատուռներին, իսկ կանգնողները ամեն նայն զօրութեամբ պաշտպանում էին իրանց դիրքը. առաջ էին գալիս ընդհարումներ և մի քանի պէտք էին հազար բազմութիւնը արկնծվում էր, որպէս ծով մրդիկ ժամանակ, իյոյցներ և հայտնաբեր թափվում էին ամեն կողմից, բարբիտենան խառնակութիւնը կատարեալ թագաւորում էր այդտեղ:

Ցանկարծ լավեց ահապի գոռոց «գալիս է» և այդ հասարակ բառը, որպէս էլէկտրական հոսանք, ցնցեց ամբողջ այդ խառնիճաղանձ բազմութիւնը. բոլորի հայեացքը դարձաւ ձորակից ներքն տանող նեղ ճանապարհի վրա: Այնտեղ տեսնվում էր կանանց մի պատկառելի բազմութիւն, որը դիմում էր դէպի վանքը. բազմութեան առջինը գերում էր մի քանիսն, միջով հասակով և տարեւոր. եթէ մօտից նայելու լինէիք այդ քանիսն,

Ահա այդ պատճառով մամուլը, նոյն իսկ Գերմանիայում, չէ հաւանում Կապրիվի արած կարգադրութիւնը և խորհուրդ է տալիս ապագայում աւելի հեռանալ, ծանր և խոհեմ լինել, և զնահատել իւրաքանչիւր պաշտօնական կարգադրութեան արժէքը:

ՆԱՄԱԿ ՖՐԱՆՍԻԱՅԻՑ

Պարիզ, 1 մարտի

Վերջապէս կայսրուհի Ֆրիդրիխ թողեց Պարիզ, ուղևորվելով դէպի Լոնդոն: Կայսրուհին, ինչպէս յայտնի է, գերմանական Վիլհելմ կայսրի մայրն է, Ֆրիդրիխ հանգուցեալ կայսրի կինն է և Անգլիայի Վիկտորիա թագուհու դուստրը: Այսպէս այդ կինը կայսրուհու դուստր, կայսրի կին և կայսրի մայր է: Հասկանալի է, որ այդպիսի մի անհասկանալի և Պարիզ դալը և այնտեղ մի ամբողջ շաբաթ մնալը չէր կարող առանց հետեւնքի և առանց ցոյցերի մնալ:

Եւ, ճշմարիտ, Ֆրիդրիխ կայսրուհու Պարիզ դալը փոխանակ մի փոքր մօտեցնելու գերմանական և ֆրանսիական ազգերը, ընդհակառակն, նրանց յարաբերութիւնների աւելի լարված, աւելի թշնամական դառնալու պատճառ եղաւ:

Պէտք է ճանաչել Պարիզի դերազդիւն բնատուրութիւնը հասկանալու համար, թէ, որքան տակաւու պարտաճանաչութիւն էր հարկաւոր, որ նա մի շաբաթ համբեր իր մէջ Պարիզի շրջակաները աւերող և մայրաքաղաքը ուժակոծող մարդու կնոջ: Միւս կողմից զարմանալի է գերմանական կայսրի յանդիմութիւնը, որը չերկնչեց իր մօրն ուղարկել այն երկրի կենտրոնը, որը յաղթվեց, անպատիւ եղաւ և աւերվեց իր հօր ձեռքով: Չէ որ այդ կայսրուհին ամեն բոլոր յիշեցնէր Պարիզին իր 70 թւին կրած հարուածները: Ինչ կը լինէր, եթէ մի օր այս վիթխարի Պարիզը, որը երեք յիշակալութիւն է արել, ինչ կը լինէր, եթէ նա մի օր կատաղէր և խորտակելով կառավարութեան զօրութիւնը, պաշարէր գերմանական դեպպանատունը և դուրս վերջէր այս անկոչ հիւրին, որի ներկայութիւնը մարմնացած անպատուութիւն էր Ֆրանսիային:

Բայց Պարիզ լուռ էր, կայսրուհին աղատ չըլում էր քաղաքում, պալատները, թանգարանները, նկարիչների արուեստանոցները, Պարիզի բոլոր հրաշալիքները բացեցին իրանց դռները կայսրուհու առաջ և պարիզցիներն ոչ մի բոլոր չը մեղանչեց հիւրասիրութեան օրէնքների դէմ,—նա լուռ էր:

Նա լուռ էր, երբ կայսրուհին չըլում էր Վերսալում, երբ նա հանգստանում էր Վերսալի պալատի այն պատշգամբի վրա, որտեղ հանգուցեալ Վիլհելմ կայսրը Ֆրանսիայի աւերակների դիմաց իրան համայն Գերմանիայի կայսր հրատարակեց:

Նա լուռ էր, երբ Ֆրիդրիխ ամուսինը կուխում էր Սան-Վուրի աւերակները, հրճվելով գուցէ իր ամուսնու անգիւթիւնեան և բարբարոսութեան հետքերը դիտելով:

Ամեն քաղաքափոխում կայսրուհին պիտի պատահէր պրուսական ուսուցիչի հետքերին: Մի ամբողջ շաբաթ Պարիզը լուսն և գուցէ նա երբեք չը գուցէր, եթէ «Köln. Zeitung» իր անվաղ հայ հոյակապներով չը գրգռէր ֆրանսիացու ինքնասիր:

Կը տեսնէիք, որ նրանում համակրութեան արժանի ոչինչ չը կայ. նրա թէ դէմքը գծագրութիւնը թէ հայեացքը պարզ ասում էին, որ նա կամ հիւանդ է լինելու և կամ ցնորկած: Մի հին վերաբերում ծածկում էր նրա մարմինը. բոբիլ ոտներով մի ձեռքով բռնած զաւազանը և ինչ որ միմիայն նա աւելի նման էր քրիստոնէութեան առաջնորդներին: Պարիզում ապրող ճգնաւորներին. նրա ետով գնում էր մի օրիորդ, որի տարիքը 18-ից էր անցնում. նա նոյնպէս բոբիլ էր, երեսը ծածկված սպիտակ քօղով: Երբ բազմութիւնը նկատեց օրիորդին՝ նորից արկնծեց:

—Ճանապարհ, ճանապարհ, լավեց ամեն կողմից. դալիս է տուրը աղջիկը:

Ողպէս նոր Մեխիա, նա առաջ էր ընթանում դէպի Երուսաղէմ—Խաւա-օղի. բարեպաշտ կանայք պաղատում էին նրան, աղիւսում էին բարեխօս լինելու իրանց համար և երջանիկ էին, եթէ կարողանային նրա հանդերձին դիպչել:

(Կը շարունակվի)

Типографія Канцел. Главнонач. Гражданск. частью на Кавказѣ, Лорисъ-Меликовская ул., д. каз.